ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱԶՆԵՐՈՒՄ
(Ըստ հայ ժողովրդական հեքիաթների)

ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

Հնուց ի վեր բանավոր ավանդության, նաև գրականության մեջ երազները հերոսին նախազգուշացնում, սովորեցնում, օգնում են կյանքում կողմնորոշվել, հրապուրում ու փորձության են ենթարկում, կանգնեցնում երկընտրանքի առաջ, երբեմն էլ՝ սադրանքի: Հեքիաթը բանավոր ավանդության այն ժանրերից է, որտեղ գլխավոր հերոսի գործողությունները երբեմն ուղեկցվում են երազներով: Երազատեսությունն առեղծվածային երևույթ է: Համարվում է, որ քնած ժամանակ մարդու հոգին անջատվում է մարմնից և շրջագայում տարածության մեջ, հանդիպում մեռած նախնիների հոգիներին, վերցնում օգտակար տեղեկատվությունը, որի ընկալումը թույլ է տալիս իրական կյանքում ընդունել ճիշտ ու նպատակահարմար որոշումներ: Ավստրիացի հոգեբան և նյարդաբան Զիգմունդ Ֆրոյդը երազատեսությունը սկսել է ուսումնասիրել որպես մարդկային կյանքի համապարփակ երևույթ՝ բնորոշ ինչպես հիվանդ, այնպես էլ առողջ մարդկանց համար: Նա նկատել է, որ երազներն էապես չեն տարբերվում առասպելներից ու հեքիաթներից[1]: Առասպելներում և հեքիաթներում մարմնավորված է ժողովրդի երևակայությունը: Ֆրոյդը դրանք ևս դարձրել է իր ուսումնասիրությունների առարկա և հոգեբանական տեսանկյունից բացահայտել է դրանց ու անհատական երևակայության արգասիքների նմանության առկայությունը[2]:

Գրական ստեղծագործություններում երազատեսության ամենահին դրսևորմանը հանդիպում ենք շումերա-բաբելոնական «Գիլգամեշ» դյուցազնավեպում. Գիլգամեշը երազներ է տեսնում Էնկիդուի և Խումբաբայի հետ մարտից առաջ, իսկ Էնկիդուն մահից առաջ նախազգուշացնող երկու երազ է տեսնում[3]: Քիչ չեն օրինակները, երբ հայտնի փիլիսոփաները, գիտնականները և երաժիշտներն իրենց հանրահայտ հայտնագործություններն ու ստեղծագործությունները կատարել են երազի ազդեցության տակ (Մեսրոպ Մաշտոց, Ռենե Դեկարտ, Դմիտրի Մենդելեև, Նիլս Բոր, Ֆրիդրիխ Կեկուլե, Ռիխարդ Վագներ և այլք): Հայտնի է, որ Մեսրոպ Մաշտո-

---

[1] S. F r e u d. Die Traumdeutung.– G.W.– Bd II/III. Leipzig und Wien, 1900, p. 11.

[2] К . А б р а х а м. Сновидение и миф. Психоаналитические труды, т. 1. Ижевск, 2009, с. 77.

[3] *Գիլգամեշ, Հին արևելքի դյուցազնավեպ, թարգմ. և ներած. Ն. Մարտիրոսյանի, Երևան, 1963, էջ 15, 25–26, 30, 40–42:*

ցին հրեշտակն է երազում ցույց տվել հայկական այբուբենը, և այդ մասին հավաստում է Մովսես Խորենացին. «Եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ կերպաձեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ»[4]:

Երազներում հերոսին տրվող խորհրդատվությամբ և նվիրատվությամբ պայմանավորված՝ մեր ուսումնասիրած հայ ժողովրդական հեքիաթներում հանդես են գալիս խորհուրդների ու նվերների կիրառման միջոցների հետևյալ տարատեսակները.

ա) արթմնի ուղևորություն երազում տեսած հարսնացուին (փեսացուին) փնտրելու նպատակով («Կորուստների խանութը», «Ջրհանի հեքիաթը», «Պճի հեքիաթը», «Սեյիդի հեքիաթը» ու այլն),

բ) խորհուրդ՝ ինչպես ձեռք բերել որևէ հրաշագործ կենդանի կամ իր («Հազարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը», «Բաղրխանե Միրան», «Ղուշ-փարին» և այլն),

գ) մեռածին, քար դարձածին վերակենդանացնելու, անբուժելի որևէ հիվանդությունից բուժելու կամ մարմնի մասերը վերականգնելու միջոց («Ասլան թաքավոր», «Ջեյրան-օղլի», «Մուխտու հեքիաթը», «Թագավորի աղջկա հեքիաթը», «Ասլան-բալասի», «Ալեքսիանոս և Լյուդվիկ», «Օխթ ախպոր քուրը» և այլն),

դ) տեղեկատվություն և խորհուրդ հերոսին՝ անցնելիք ճանապարհի, սպասվելիք վտանգների և դրանցից խուսափելու մասին («Ջեյրան-օղլի», «Ասլան-բալասի», «Արա Գեղեցիկ», «Օխթ ախպոր քուրը», «Տերտերոչ ախչիկ», «Լաշ վոգ, Հաշ մրդ» և այլն),

է) քնած ժամանակ հերոսի տեղափոխություն («Ջիբրաել-Խրդրը Նաշ բին», «Հովոն» և այլն),

զ) երազում հերոսին առաջարկված ծառայություն («Ըսկաշ նդաշ ը թաքավորի պատմությունը»),

է) նվիրատվություն հերոսին քնած ժամանակ («Յաշօղլանի հեքիաթը», «Լալ Մաջրյում» և այլն),

ը) երազահանության շնորհը որպես հերոսի գործողություններին նպաստող միջոց («Էրազ հանող տղեն ու թաքավորի բախտը», «Թաքավորի էրազնին», «Վաղինակի ու Բենյամինի հեքիաթը», «Ճիխկո», «Թաքավորի երազները» և այլն),

թ) խորհուրդ՝ որտեղ որոնել բախտը («Բախտի հետևից ման եկողը», «Էրկու կըճուճ օսկին» և այլն):

---

[4] *Մովսիսի Խորենացւոյ. Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, ԾԳ, էջ 327:*

Ինչպես նկատել է Ֆրոյդը՝ հնում՝ դեռևս Արիստոտելից առաջ, համարել են, որ երազատեսությունը ոչ թե անրջող հոգու արգասիք է, այլև՝ աստվածության կողմից թելադրանք՝ զգուշացնելու կամ ապագան կանխագուշակելու նպատակով[5]: Այսօրինակ ընկալմամբ պայմանավորված՝ հայ ժողովրդական որոշ հեքիաթներում հերոսի տեսած երազների հիման վրա ձևավորվում են սյուժետային զարգացումները[6]: Հաճախ հերոսը քնած ժամանակ երազում տեսնում է իր ապագա ընտրյալին և անմիջապես ուղևորվում նրան որոնելու՝ ուղեկցվելով խորհրդատվությամբ և նվիրատվությամբ, որոնք կրկին նրան տրվում են երազում: Մատնանշված ընտրյալին գտնելու համար աստված հերոսին կողմնորոշում է ինչ-որ մեկի միջոցով (ծերունի, մեռած նախնի, թռչուն, կենդանի, ինչ-որ մարդ, ինչ-որ ձայն և այլն): Երազում ընտրյալը ներկայանում է երբեմն հեքիաթի սկզբում (եթե հերոսի գերագույն նպատակը հարսնացուին գտնելն է), երբեմն էլ՝ միջնամասում (եթե նա այլ նպատակ ունի իրագործելու, և ճանապարհին երազում նրան ուղղորդում են հարսնացուին որոնելու): Այսպես օրինակ. «Կյաՙլիս են բիձի տուն: Բիձի տանը շատ են կենում, քիչ են կենում՝ Ջահանը էրազ ա տենում, վրերդի, թե ի՞նչ քաղաքում մի թաքավորի ըխճկա հետ սիրահարվում ա»[7], «Շատ ա քյնում, քիչ, քյնում ա մի տեղ, որ տեսնում ա բեզարել ա, էտեղ ծիու պեռը վերցնում ա, ծին կապում մի չիմանում, ինքը կրլուխը տընում ա պեռի վրաՙ ու քնում ա: Որ քնում ա, էրազին մի ախճիկ ա տենում նաՙ, էտ ըխճկա հետ, իրոք, սիրահարվում ա…»[8], «Էտ միչնակ ախպերը քշերն էրազում մի օխտը հյուսանի ըխճրկա տեհավ: Որոշեց, որ քյնաՙ էտ օխտը հյուսանի ըխճկանը պիրի…»[9], «Տղեն էրազում տեսնում ա, որ ուրուշ քաղաքում իրան մի ախճիկ հավան ա կենում: Էտ ախճիկն էլ էրազում էտ տղին ա տենում: Էտ տղեն վեր ա կենում, էտ էրազի հիման վրաՙ, ճանապար ընգնում ու քյնը՛ւ»[10]: «Կորուստների խանութը» հե-

---

[5] З. Ф р е й д. Толкование сновидений. М., 2011, с. 8.

[6] *Հերոսին երազում զգուշացնելու և ապագան կանխագուշակելու մոտիվը բազմիցս հանդիպում է «Սասնա ծռերի» պատումներում. երազում Սանասարին հայտնում են եկեղեցի կառուցելու և իր հզորանալու միջոցների մասին: Նմանատիպ երազ տեսնում է նաև Դավիթը: Մեծ Մհերին երազում ասում են, որ տղա կունենա, բայց նույն օրն էլ կմեռնի: Ջենով Հովանը երազում տեսնելով Սասնա աստղի խամրելը՝ օգնության է հասնում Դավթին և այլն (Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936, էջ 607–648, Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Մոկս), կազմողներ՝ Ս. Բ. Հարությունյան, Է. Հ. Խեմչյան, Մ. Հ. Խեմչյան. Ա. Կ. Պողոսյան. Երևան, 2015, էջ 219–255):*

[7] *Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), Տավուշ, հ. 21, կազմող՝ Է. Հ. Խեմչյան, Երևան, 2000, էջ 74, № 10 (10), «Ջրհանի հեքիաթը»:*

[8] *ՀԱԲ, 25, Իջևան (Զորոփոր), կազմող՝ Է. Հ. Խեմչյան, Երևան, 2008, էջ 149, № 37 (37), «Կորուստների խանութը»:*

[9] *ՀԱԲ, 25, էջ 36, № 3 (3), «Ոճի հեքիաթը»:*

[10] *ՀԱԲ, 25, էջ 121, № 25 (25), «Սեյիդի հեքիաթը»:*

քիաթում հերոսի առաջին երազին անմիջապես հետևում է երկրորդը, որտեղ մի երկարամորուս ծերունի նրան երեք խորհուրդ է տալիս և պատվիրում, որ այդ խրատները նա անպայման օգտագործի. «Քեզ պետքը կկյա՛ն»,– ասում է ծերունին և անհետանում: Օգտագործելով վերջինիս խորհուրդները (առաջինը՝ հանդիպած որևէ մեկին ինչպես կոչել է, շարունակի նույն կերպ կոչել, երկրորդը՝ եկեղեցու մոտով անցնելիս, որքան էլ կարևոր գործ ունենա, մոմ վառի, հետո շարունակի ճանապարհը, երրորդ՝ ճանապարհին որտեղ որ արևը մայր մտնի, այնտեղ գիշերի)՝ հերոսը կարողանում է խուսանավել իր առջև ծառացած վտանգներից և գտնել իր երջանկությունը:

Ինչպես հայտնի է, հերոսին՝ իր գլխավոր նպատակին հասնելու համար, երբեմն անհրաժեշտ է լինում հրաշագործ կենդանու կամ իրի առկայությունը, որոնք նա ձեռք է բերում տարբեր եղանակներով: Դրանցից մեկը երազատեսությունն է: «Հազարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը» հեքիաթում թագավորի փոքր, խելապակաս որդին՝ հոր չորացած այգին կանաչեցնելու նպատակով, գնում է Հազարան բլբուլի որոնումներին: Մինչև ծովին հասնելը նրան խորհուրդներով օգնում էր հոր ախոռի՝ աստծո հրամանով լեզու առած «քոստ» ձին, որը, սակայն, նրան ծովն անցկացնել չէր կարող: Երազում նրան ինչ-որ ձայն ասում է. «– Ալո՛-Դինո, էտ քարը պոկա, էտ քարի տակին իրեք հատ ծովեղեն ձիու գյամ կա»[11]: Աներևույթ խորհրդատուն հերոսին տեր է դարձնում ծովեղեն ձիերի[12], որոնց օգնությամբ կարողանում է ձեռք բերել Հազարան բլբուլը: «Բաղրխանե Միրան» հեքիաթում հերոսը հրեղեն ձիերի սանձերի գտնվելու տեղի մասին կրկին իմանում է երազում՝ երկու-երեք աղավնու զրույցից. «Էնա քյարի տայ իրեյ հատ գյա՛մ կա, էն ֆարազա չկիտե: Թող էրթա՛, խանի, մեչ ծովուն կախի, խրեղեն ծին տյուս կուգյա0, էն գյա՛մ պերան գա՛նի, մեչ յոթ ավուր կխասնի»[13]: Ի դեպ, հայ ժողովրդական հեքիաթներում հերոսն աղավնիների զրույցին ականջալուր է լինում թե՛ երազում, թե՛ արթմնի[14]: Որոշներում երազի մեջ խորհուրդ տվողը որոշակի անձ, կենդանի կամ թռչուն չէ: Այսպես օրինակ, «Ղուշ-փարին» հեքիաթում. «Հա՛ էրազըմը էկան ասեցին.– Ա՛յ տ-

---

[11] Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. I, Այրարատ, կազմող՝ Ա. Մ. Նազինյան. Երևան, 1959, էջ 35, № 1, «Հազարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը»:

[12] Այս մոտիվը հանդիպում է նաև «Սասնա ծռերի որոշ պատումներում, երբ Մայր Աստվածածինը Սանասարին երազում ասում է՝ որտեղից ձեռք բերի հրեղեն ձին և ասպազենը, «Սասնա Դավիթ», Մոկս, էջ 222, № 115 (115):

[13] ՀԺՀ, XV, Վան-Վասպուրական, կազմող՝ Վ. Գ. Սվազլյան, Երևան, 1998, էջ 351, № 51, «Բաղրխանե Միրան»:

[14] Խորհրդատու և նվիրատու թռչունների մասին տե՛ս Մ. Հ. Խ ե մ չ յ ա ն. Խորհրդատու և նվիրատու թռչունը Կարսի հրաշապատում հեքիաթներում.– Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ պարբերական», հ. 19, Երևան, 2016, էջ 185–191:

դա, խի՞ ես էկել ըտեղ թեք ընկել՝ քնել»[15]: Ինչպես տեսնում ենք, չի երևում, թե ով է խորհրդատուն: Կարելի է եզրակացնել, որ աստծո ձայնն է կամ նրա կողմից ուղարկված միջնորդ (հրեշտակ, ծերունի, թռչուն), որոնք հերոսին մատնացույց են անում հրաշագործ առարկաների տեղը: Արքայազնը հորից պահանջելով հրաշագործ հատկություններով օժտված ձին, թուրը և մատանին՝ կարողանում է հաղթահարել բազում դժվարություններ և ձեռք բերել թագավորի աչքի դեղը:

Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում շատ հաճախ հմայական արգելքը (թռչունների պատվիրանը՝ իրենց գաղտնիքը ոչ-ոքի չասել[16] կամ քառասուն օր պահել այդ գաղտնիքը[17]) խախտելու կամ օձը սպանելիս մի կաթիլ արյուն վրան ընկնելու[18] արդյունքում հերոսը քարանում է: «Քար դառած» հերոսի վերակենդանանալը, ինչպես նաև հակահերոսի կողմից առաջացած անբուժելի հիվանդությամբ[19] կամ կուրությամբ[20] տառապողի բուժումը երբեմն իրագործվում է երազում տրված խորհրդատվության միջոցով: Մեռած նախնու հոգին մարմնավորող թռչունները կամ ծերունին երազի միջոցով նրան տեղեկացնում են քարացած (հիվանդ) հերոսի վերակենդանացման (բուժման) միջոցի մասին. «Մե գիշերմ Ալեքսիանոսը էրազին տեսնում է մի ծերունում: Ծերը ըսում է, թե օր Լուդվիկը սրտով կուզէ, օր դու լավնաս, թող իրան էրկու տղին մորթէ, արնով քեզի լողցնէ, կլավանաս:

Էդ ծերունին կէրթա Լուդվիկին էրազ, կըսէ՝ հէչ մի տանջվի, Ալեքսիանոսը իրա ցավի դեղը գիտէ»[21]:

Կենարար հեղուկով հիվանդին, կուրացածին, մեռածին կամ քար դարձածին արյամբ լողացնելու մոտիվը տարածված է ոչ միայն հայ ժողովրդական, այլև՝ աշխարհի շատ ժողովուրդների հեքիաթներում[22], որոնց մեծ մասում վերակենդանանում է նաև անմեղ զոհը՝ երեխան: Այս երևույթը կարելի է համեմատել արյան փոխներարկման հետ. նորածնի առողջ արյունը ներարկվում է հիվանդ կամ մե-

---

[15] *ՀԺՀ, I, էջ 51, № 2, «Ղուշ-փարին»:*

[16] *Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Կարս), կազմողներ՝ Ս. Բ. Հարությունյան, Ս. Ա. Վարդանյան, Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Մ. Հ. Խեմչյան, Երևան, 2013, էջ 102, № 11 (11), «Ասլանզադեի հեքիաթը»:*

[17] *Կարս, էջ 95, -10 (10), «Օխթ ախպոր քուրը», Կարս, էջ 100–101, № 11 (11), «Ասլանզադեի հեքիաթը», ՀԺՀ, VIII, Գուգարք, կազմողներ՝ Ա. Մ. Նազինյան և Ռ. Հ. Գրիգորյան, Երևան, 1977, էջ 155, № 22, «Ասլան-բալասի»:*

[18] *ՀԺՀ, I, էջ 294, № 20, «Ջեյրան-օղլի»:*

[19] *Կարս, էջ 224, № 33 (33), «Ալեքսիանոս և Լյուդվիկ»:*

[20] *ՀԱԲ, 21, էջ 81, № 11 (11), «Զոբաշը»:*

[21] *Կարս, էջ 224, - 33 (33), «Ալեքսիանոս և Լյուդվիկ»:*

[22] Г. Р. Хусаинова. Отражение традиционных целительских знаний башкир в народных сказках.– «Вестник челябинского государственного университета», № 11, 2010, с. 143–146.

ռած հերոսին, ով բուժվում կամ վերակենդանանում է, իսկ դոնորը շարունակում է ապրել: Անկասկած մեր նախնիները տիրապետել են բժշկական որոշակի գիտելիքների, որոնց հեռավոր արձագանքը պահպանվել է հեքիաթի համատեքստում՝ որպես հրաշագործություն: Արյան հմայական-կախարդական զորությունը դեղի ու դեղամիջոցի գործառույթ է ստացել և մուտք գործել բուժման խորհրդանշակարգ[23]:

Կուրությունից[24], անդամալուծությունից[25] բուժվելու կամ մարմնի կորցրած մասերը վերականգնելու[26] համար հեքիաթի հերոսը երբեմն օգտվում է երազում տրված խորհրդատվությունից և նվիրատվությունից. «Մե գիշերմ աղջիկը էրազին կը տեսնի էն իրան տանող ըխտիարին: Ըխտիարը կըսէ.– Քո աչքերը քոծիդ քովն է, մե քանի դաստա վարդ-մանիշակ ղրկէ, թող աչքով ծախեն, աչքերդ բերեք: Կը դնեք տեղը, ձեր տան քովի առվի ջրից, կը քսես, աչքերդ կը լավնա»[27]: Երկրի ընդերքից բխող ջրի հրաշագործ ներգործությունը հերոսի մարմնի կորցրած մասերը վերականգնելիս նույնպես կարելի է հանգեցնել անդրաշխարհի և իրական աշխարհի հետ դրա՝ որպես կապող օղակ հանդես գալու գաղափարին: Պատահական չէ, որ բազմաթիվ հեքիաթներում մարմնի կորցրած մասերը վերականգնելու համար խորհրդատուի գլխավոր պայմանն է նախ փետուրը, մազը կամ թեփուկը ջրի մեջ թաթախել, հետո՝ քսել վերականգնվող մասին:

Հայ ժողովրդական հեքիաթներում երազը երբեմն չի սահմանազատվում իրական կյանքից: Բանասացը պատումի ընթացքում չի որոշակիացնում հերոսը խորհրդատվությունը երազո՞ւմ է ստացել, թե՞՝ ուղևորության ժամանակ ճանապարհին հանգստանալիս: Թե՛ երազում, թե՛ արթուն ժամանակ նա տեսնում է՝ ինչպես մեկ, երկու կամ երեք թռչուն կերպարանափոխվում են (աղջիկների, մայր ու աղջկա, պառավի ու աղջկա) և իրենց զրույցի ընթացքում նրան տեղեկացնում մոտալուտ վտանգների ու դրանք շրջանցելու միջոցների մասին[28]: Ինչպես նշում է Սարգիս Հարությունյանը՝ կերպարանափոխումը կատարվում է հաճախ դաշտում կամ անտառում, այսինքն՝ վայրի բնության մեջ. տարածքային միավորներ, որոնք գտնվում են մարդկային սահմանափակված բնակավայրերից՝ կյանքից հեռու և

---

[23] Ե. Զ ա ք ա ր յ ա ն. *Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, Երևան, 2016, էջ 83:*

[24] *Կարս, էջ 170,№ 26 (26), «Թագավորի աղջկա հեքիաթը», ՀԺՀ, I, էջ 364, № 26, «Վարդիթեր», ՀԺՀ, X, Տուրուբերան (Մուշ-Բուլանըխ), կազմող՝ Ս. Տարոնցի, Երևան, 1967, էջ 97, 98, № 20, «Դարվեշի ու աղջկներու հեքիաթ»:*

[25] *ՀԺՀ, I, էջ 214, № 14, «Մուխսու հեքիաթը»:*

[26] *ՀԺՀ, I, էջ 224, № 15, «Ասլան թաքավոր»:*

[27] *Կարս, էջ 170, № 26 (26), «Թագավորի աղջկա հեքիաթը»:*

[28] *ՀԺՀ, I, էջ 292, - 20, «Ջեյրան-օղլի», ՀԺՀ, VIII, էջ 155–157, № 22, «Ասլան-բալասի», ՀԱԲ, 21, էջ 28, № 4 (4), «Արա Գեղեցիկ»:*

խորհրդանշում են անդրաշխարհը՝ իբրև բաց ու անպարփակ տարածություն[29]: Հեքիաթներից մեկում հերոսը եղբոր հարսնացուի որոնումների ճանապարհին, բազմաթիվ փորձությունների ենթարկվելուց հետո, նստում է մի ծառի տակ հանգստանալու: Ծառի վրա գտնվող մի աղավնու և ձագերի զրույցից իմանում է իր առաջ ծառացող վտանգների մասին. «Հըլը չի պըրծէ, հըլը շատ փորցանքներ կա էդոր դեմը: Էռնեկ մեր լիզուն հասկընար: Գեղի վըրեն մի հատըմ կարմունջ կա, էդ կարմունջով օր անցնի, փըլի կը, կընգնի ջուրը, խեխտի կը: Թե օր էդորեն քիչըմ ցած իջնի, էնդեղ սաղրիկ տեղ կա, էդտեղեն օր անցնի, հէչ բան չի էղնի: Պարսիկների շահը կուզէ, օր էդոր գըլոխը դաք խաղա, էդոր էդևեն ֆայտոն է ղըրկէ: Ֆայտոնին էլ էման դեղ է քըսէ, էդ դեղեն մեռնի կը: Լավ կէղնի, օր չը նըստի, ըսէ՝ շնորհակալ եմ, ու ֆայտոնը հետ դարցու»[30]: Եթե որոշ հեքիաթներում ակնհայտ է հերոսին երազում խորհուրդ տալու հանգամանքը, ապա այստեղի քնի և արթուն լինելու սահմանագիծը չկա, թեև նրա եղբայրը որոշակիորեն երազում է տեսել հարսնացուին:

Հերոսին մոտալուտ վտանգի մասին տեղեկացնում և դրանից խուսափելու համար երազում խորհուրդ է տալիս մի մարդ[31] կամ պարզապես ասում են (հայտնի չի՝ ովքեր)՝ ինչ միջոցով ազատվի փորձանքից. «Էրազի մէչ կուգյան ինոր կասեն. «Առ քյե խամար տաս ավուր խաց-ճյուր, մըտի ճրախկըլի մէչ, քյո խոր ծեռեն կփոթրնես»[32]:

Ինչպես նշեցինք աստվածահայտնությունը[33] հեքիաթի երազներում հանդես է գալիս միջնորդավորված ձևով (ինչ-որ ձայն կամ անհատ): Երբ հերոսի առջև այնպիսի խնդիր է ծառանում, որ նա ի զորու չէ հասնել դրա լուծմանը, աստված միջամտում է երազի օգնությամբ: Հայ ժողովրդական որոշ հեքիաթներում[34] որպես աստծո միջնորդ ատենահաս սուրբ Սարգիսն է[35]: «Զիբրաել-Խըդրը Նաբին» հե-

---

[29] *Ս. Բ. Հարությունյան. Առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 301:*

[30] *Կարս, էջ 92–93, № 10 (10), «Օխթ ախպոր քուրը»:*

[31] *ՀԺՀ, XVII, Մոկս, կազմող՝ Թ. Լ. Հայրապետյան, Երևան, 2012, էջ 40, № 4, «Լավոգ, Հաբ Օմըդ»:*

[32] *ՀԺՀ, XIV, Վան-Վասպուրական, կազմող՝ Ա. Ս. Ղազիյան, Երևան, 1999, էջ 220, № 19, «Տերտըրոչ ախչիկ»:*

[33] *Երազներում մերօրյա աստվածահայտնության մասին տե՛ս Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան. Աստվածահայտնությունը երազներում.– Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 139–144:*

[34] *ՀԺՀ, X, Տուրուբերան (Մուշ-Բուլանըխ), կազմող՝ Ս. Տարոնցի, Երևան, 1967, էջ 99, № 20, «Դարվեշի ու աղջըկներու հեքիաթ», «Թուրինջի Ահմատ», Ե. Լալայեան. Մարգարիտներ հայ բանահիւսութեան, գ. Գ, էջ 33–46, ՀԺՀ, XIV, էջ 13–39, № 1, «Զիբրաել-Խըդրը Նաբին»:*

[35] *Ս. Բ. Հարությունյան. Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ.– Սուրբ Սարգիս, Գիտաժողովի նյութեր, Երևան 2002, էջ 24–42, Թ. Լ. Հայրապետյան.*

քիաթում նրա կողմից քնած հերոսի ականջի մեջ քնի ուլունք մտցնելով՝ իրագործվում է հերոսի տեղափոխությունն այլ տարածություն, որտեղ նա հանդիպում է իր ընտրյալին, կատարվում է մատանիների փոխանակություն և վերադարձ, որից հետո զարգանում է դեպքերի հետագա ընթացքը: Այստեղի Խըդրը և Նաբին[36] *հայտնվում են հերոսին ինչպես երազում, այնպես էլ արթմնի՝ թռչունների կերպարանափոխվելու միջոցով, թեպետ այս պարագայում նույնպես չի զգացվում երազի և իրականության սահմանը. «Սահաթ մ'էրկու ընցավ, մեկ էլ տեսավ, որ էմել կամշընեկաց մեչեն խըշխըշոցի ծեն էկավ: Ջբոն էմել յավաշըմ կնացց, մտավ մեչ կամշընեկաց, տեսավ որ ի՞նչ. Խըդրը, Նաբին խավքու կա0ղա0 նստիր են վեր կամշընեկաց»*[37]*: Հավքերի զրույցից նրա ծառան՝ Ջբոն, տեղեկանում է իր տիրոջ առաջ ծառացած վտանգների մասին, կարողանում է կանխել դրանք, սակայն, սուրբ Սարգսի պատվիրանը չկատարելով, այն է՝ այդ մասին ոչ ոքի չասել, քարանում է: Այս հեքիաթում քարացած հերոսը վերակենդանանում է սուրբ Սարգսի խորհրդով՝ ևս անմեղ երեխայի զոհաբերությամբ, սակայն «Աստված տեսավ, որ էրկսի սիրտն էլ դողրի էր դեխ Ջբոն, էմել տղին կյանքյ իտուր»*[38]*:*

Երազում հերոսի տեղափոխությունն այլ տարածություն երբեմն կատարվում է խորհրդատուի արած լավությունները չգնահատելու պարագայում՝ նրան խորհրդատուի մասին հիշեցնելու նպատակով. «Հովոն ի, առատուն որ կաթնաց, կտիսնա, որ ի՞նչ, ի՞նչ թաքավորի տուն, ի՞նչ պան, էմէ՛լ ուր խին տան մեչն ի: Կասի՝ էսա էրազ ի՞, ի՞նչ ի… հա, իմցա, էսա էմէ՛լ խալիվորի արածն ի, խալիվոր զիկ ասաց՝ ինչ պան որ կանես, զիկ հիշա, նոր արա. ես էն ռճի իրիկուն ինոր մոռցա հիշելու, ինոր խամար էսա ողիեն իմ գյլեռխ իպե»[39]*: Սակայն վերջինիս հերոսին պատժելով հանդերձ՝ երբեմն մեկ այլ խորհրդատուի տեսքով նրան ուղղորդում է դեպի իր նպատակակետը:*

Ինչպես հայտնի է, հեքիաթի հերոսի անցումն իրական աշխարհից անդրաշխարհ կամ հակառակը, կատարվում է տարբեր եղանակներով (երախտապարտ թռչունի կամ կենդանու միջոցով, հորի, ջրհորի միջով և այլն): Այս հանգամանքն իր վաղնջական դրսևորումն է գտել Էտանայի մասին առասպելում[40]*: Ըստ շումերաքքադական ավանդության՝ Կիշ քաղաքի տիրակալ Էտանան (մ. թ. ա. XXI -*

Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, 2016, էջ 144–148:

[36] *Հիշատակությունների համաձայն՝ քրդերը սուրբ Սարգսին անվանում են Խըդրը Նաբի (Լ. Սիմոնյան - Մելիքյան. Տոմարային ծիսաշար, հ. 2, Երևան, 2007, էջ 27):*

[37] *ՀԺՀ, XIV, էջ 33, № 1, «Ջիբրաեել-Խըդրը Նաբին»:*

[38] *Նույն տեղում, էջ 39:*

[39] *ՀԺՀ, XIV, էջ 283, -24, «Հովոն»:*

[40] В. К. Афанасьева. Этана.– Мифы народов мира, т. 2. М., 1988, с. 671.

դար), լինելով անպտուղ, երազում էր ձեռք բերել «ծննդի բույսը», որը գտնվում էր երկնքում, և սովորական մահկանացուն չէր կարող գնալ դրա հետևից: Դատավոր և պայմանագրերի պահապան Շամաշի՝ երազում տրված խորհրդով Էտանան գտնում և փրկում է պատժված արծվին, որը, ի նշան երախտագիտության, նրան հասցնում է երկինք: Իսիդոր Լևինը, համադրելով շումերաաքքադական ավանդությունը բանագիտության մեջ հայտնի արծվի ու մարդու բարեկամության և մարդու թռիչքը արծվի վրա մոտիվների հետ՝ ենթադրում է, որ զրույցը վերարտադրում է ձևափոխված ծիսական պատում կախարդի՝ պահապան հոգու միջոցով անդրաշխարհ ճանապարհորդության մասին[41]:

«Ըսկաշ նդաշ թաքավորի պատմությունը» հեքիաթում հերոսին երազում թռչունն ինքն է առաջարկում իր ծառայությունը: Դեպի անդրաշխարհ գնալու սահմանագլխին (օվկիանոսի ափին) տեսնում է. «… մի դուշ եկավ, ասեց թե.– Էսքան պրիպաս ունեմ, ես եկել եմ, որ քեզ էս օվկյանոսի վրովն անց կըցնեմ էն աշխարհը տանեմ, կարա՞ս վրես նստես»[42]: Նա արթնանալուց հետո օգտվում է թռչունի առաջարկած ծառայությունից և անցնում դեպի անմահների աշխարհ: Ըստ հեքիաթի՝ հետագա գործողությունների ընթացքում ժխտվում է այսրաշխարհում անմահության գաղափարը և, թռչունի միջոցով նորից անդրաշխարհ հասնելով, հերոսը հրաժեշտ է տալիս կյանքին, որովհետև իր համար դա էր նախասահմանված:

Վերը նշեցինք, որ հեքիաթի հերոսը երազում խորհրդատվության միջոցով տեր է դառնում հրաշագործ իրերի և կենդանիների: Կան հեքիաթներ, որոնցում հերոսը, ինչպես իրական կյանքում, երազում է նվեր ստանում և օժտվում գերբնական հատկություններով.

«… տղեն օրեցօր կը մենձընա: Կէղնի տասնչորս-տասնհինգ տարեկան, մե օրմ էլ քնած վախտը էրազ կը տեսնի. էդ դարվիշը, մե թասըմ գինի ձեռը, կը մոտենա Յաշօղլանին, կուտա գինին, կըսէ.– Խմէ, էսի օր խմես, օխտը գոմշի ուժ կուքա վրեդ: Ոնչ թե մարդիք, ասլանն ու վագրն էլ չեն սիրտ էնէ մոտենա քեզի:– Տղեն կը խմէ գինին ու կը զարթնի, կը տեսնի, օր տեղի մեջ պարկած է, կըսէ.– Էհ, էրազիս եմ տեսել: Էդ օրվանից Յաշօղլանը էնքան կուժեղնա, օր ձեռը որ ծառին քցէ, քոքից կը հանէ, քելելուց ոտները կը թաղվի գետնի մեջ»[43]:

Եթե ի վերուստ որոշված է, որ հերոսը պետք է գերբնական ուժով օժտվի, ապա երազում արված նվիրատվությունը կարող է իրական ներգործություն ունենալ: Երազների մեծ մասն ունի մի ընդհանուր առանձնահատկություն. դրանք չեն են-

---

[41] В. К. А ф а н а с ь е в а. Аккадская (Вавилоно-Ассирийская) литература.– История всемирной литературы, т. I. М., 1983, с. 108.

[42] *ՀԱԲ, 25, էջ 209, -№ 74 (74), «Ըսկաշ նդաշ թաքավորի պատմությունը»:*

[43] *Կարս, էջ 106, № 13 (13), «Յաշօղլանի հեքիաթը»:*

թարկվում տրամաբանության օրենքներին, որին ենթակա է մեր գիտակցությունը. երազներում վերանում է տարածության և ժամանակի կատեգորիան[44]*:*

Հնուց ի վեր մարդը ձգտել է հասկանալ ու մեկնաբանել երազները, որոնք իրենց արտացոլումն են գտել հեքիաթներում: Հայ ժողովրդական բազմաթիվ հեքիաթներում թագավորը երազ է տեսնում[45] *և ցանկանում մեկնաբանել այն, դիմում է պալատական և ոչ պալատական երազահանների օգնությանը: Երազահանության շնորհը տրված է ոչ բոլորին, ովքեր կարողանում են ճիշտ մեկնաբանել երազը՝ որպես հերոսին ի նպաստ նրա հետագա գործողությունների: Որոշ հեքիաթներում նա չունի այդ շնորհը, այլ ճանապարհին հանդիպած օձի խորհուրդներով մեկնաբանում է թագավորի երազները:*

Երազներում խորհրդատվությունը հանդիպում է նաև հայ ժողովրդական իրապատում հեքիաթներում, որտեղ հերոսին ինչ-որ խորհուրդ են տալիս (մի մարդ, ծերունի), սակայն նա հետամուտ չի լինում դրան: Խորհրդատուն հայտնվում է մեկ ուրիշի երազում և նրա միջոցով հերոսին դրդում գնալ իր բախտի հետևից ու տեր դառնալ հարստության[46]*:*

Դիտարկումները ցույց են տալիս, որ ի թիվս գործողությունների ընթացքում հանդիպած բազմատեսակ խորհրդատուների և նվիրատուների՝ իր գերագույն նպատակին հասնելու համար հեքիաթի գլխավոր հերոսը նաև օգտվում է երազում խորհրդատվություններից ու նվիրատվություններից:

Մտահոգված իր առջև ծառացած բարդագույն խնդիրներից՝ հեքիաթի հերոսը ճանապարհ ընկնելուց առաջ կամ ճանապարհին հանգստանալիս (ծառի տակ, աղբյուրի մոտ կամ դաշտում) քնում է կամ նիրհում: Այն դիտարկվում է որպես մարդու ժամանակավոր մահ, որի ընթացքում հերոսի հոգին հանդիպում է իր մեռած նախնու հոգու, աստծո կամ նրա միջնորդի հետ, ովքեր, իմանալով հերոսի անցնելիք ճանապարհի ու դժվարությունները հաղթահարելու միջոցների մասին, իրենց խորհուրդներով ու երազում երբեմն նվեր մատուցելով՝ նպաստում են նրա գործողություններին:

---

[44] Э. Ф р о м м. Забытый язык. Введение в науку понимания снов, сказок и мифов. М., 2010, с. 5.

[45] *ՀԱԲ, 21, էջ 128–129,№ 33 (33), «Թաքավորի երազնին», ՀԱԲ, 21, էջ 196–197, № 18 (18), «Երազ հանող տղեն ու թաքավորի բախտը», ՀԱԲ, 21, էջ 112–113, № 20 (20), «Վաղինակի ու Բենյամինի հեքիաթը», ՀԱԲ, 25, էջ 196–197, № 61 (61), «Թաքավորի երազները», ՀԱԲ, 25, էջ 162–163, № 40 (40), «Ճիխկո», Կարս, էջ 179–181, № 28 (28), «Թափտմի հեքաթը», Մոկս, էջ 109–110,* № *20 (20), «Աղքատն ու օձը»:*

[46] *Կարս, էջ 307–308, № 68 (68), «Երկու կճուճ օսկին», ՀԱԲ, 25, էջ 172–174, № 44 (44), «Բախտի հետևից ման էկողը»:*

СОВЕТОВАНИЕ И ДАРОВАНИЕ ВО СНАХ
(По армянским народным сказкам)

МАРИНЕ ХЕМЧЯН

Р е з ю м е

Исследование сказок почти всех историко-этнографических регионов исторической Армении показывает, что в числе разнообразных советчиков и дарителей (бог, ангел, царь, старик, старуха, животное, птица и т. д.), встречавшихся в ходе действий главного героя сказки, он для достижения своей основной цели пользуется также советами и дарами, полученными во сне. Сон рассматривается как временная смерть человека. В состоянии сна душа главного героя сказки встречается с духом своего умершего предка, с богом или его посредником (старик, ангел, птица, животное, некто, какой-то голос и т. д.). Они, зная о будущем пути главного героя и о средствах преодоления трудностей, своими советами и, иногда, приподнесением дара, помогают его действиям.

ADVISING AND DONATING IN DREAMS
(According to Armenian folk tales)

MARINE KHEMCHYAN

S u m m a r y

The research of the fairy tales from almost all the Armenian historical-ethnographic regions reveals that among the various advisers and donors encountered during the actions (god, angel, king, old man, old woman, animal, bird, etc.), in order to achieve the ultimate purpose, the principal character of the tale uses also the advice and donations from the dream. Sleep is regarded as a man's temporary death, during which the soul of the character encounters with a spirit of his dead ancestor, the God, or the mediator of the God (old man, angel, bird, animal, some human, some voice, etc.). Knowing about the characer's future journey and the ways to overcome the difficulties, they assist the character's actions with their advice and sometimes giving a gift in a dream.